ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1035-Ա « 19 » մարտի 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի Հ.2911-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ Հ.52 ԵՐԹՈՒՂՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, 11-րդ հոդվածի 6-րդ մասով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների 1-ին մասերով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով.

1.Երևանի քաղաքապետի 2012 թվականի մարտի 30-ի «Երևան քաղաքի ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցը հաստատելու մասին» հ.2911-Ա որոշման՝ N 1 հավելվածում ընդգրկված ավտոբուսային հ.52 երթուղին շարադրել հետևյալ խմբագրությամբ.

52	ՀԱԹ - ՆՈՐ ՆՈՐՔԻ 2-ՐԴ ՋԱՆԳՎԱԾ – ԲԱԳՐԵՎԱՆԴԻ ՓՈՂՈՑ ՀԱԹ (ս.կ.) - Օհանովի - Շերամի - Ռաֆֆու - Սեբաստիայի - Լենինգրադյան - Կիևյան - Վազգեն Առաջին Վեհափառի փողոցներ - Կոմիտասի - Ազատության պողոտաներ – Ներսիսյան - Ուլնեցու – Պարույր Սևակի - Ռուբինյանց փողոցներ – Ռուբինյանց նրբանցք – Ծարավ Աղբյուրի – Աճառյան փողոցներ - Գայի պողոտա - Ստեփանյան - Մոլդովական փողոցներ - Նոր Նորքի 2-րդ զ/ծ – Բագրևանդի փողողոց («Հրաշք» համալիր) (վ.կ.): Հետադարձը՝ նույն ուղեգծով:	38.6	115	20.3	9	11	12/13	9/6/3 7/4/2	Երթուղու ուղեգծի փոփոխու-թյուն

2.Հանձնարարել «Երևանտրանս» և «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ կազմակերպել Երևանի ներհամայնքային ավտոբուսային հ.52 երթուղու աշխատանքը՝ սույն որոշմամբ սահմանված ուղեգծով:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի վրա:

4.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ